

տներն ծախէին կէս գին . այլք զխանութիւնն  
 եւ զէսպպպինն առանց դնով . այլք զհանգերծս  
 եւ զազանելիքն . կէսք զտան ինչքն եւ զապ-  
 րանքն . ոմանք երթային եւ այլք ի ծով ան-  
 կանէին . այլք զնացեալ մերձ սօխթայիք՝  
 ձեռս աղանէին եւ ի նոցանէ կոտորէին . եւ  
 կիտոց մատաղատունկ մանկունք եւ կո՛յս  
 աղջկունք ի ճանապարհին մեռանէին ի սո-  
 վոյ եւ ի ծարաւոյ , յանձրեւոյ եւ ի ցրտոյ :  
 Եւ ո՞վ կարէ պատմել կամ գրով արկանել  
 զանցս եւ զվիշտս մեծի աղէտից , զոր յան-  
 ճնարին չարի գիպան . յառաջմէ հեծելա-  
 զօրքն , յետուստ ծովն , յաջմէ սով եւ յահեկէ  
 սրածուծիւն . եւ ոչ գոյ թիւ աղաղակի նո-  
 ցա . եւ ոչ կարէին փախչել ուրեք եւ ոչ զգլինս  
 փրկանաց անձանց իւրեանց տալ :

Իսկ խօնթքարն զնաց մինչ յԵրեւան . եւ  
 առ զբերթն եւ զիւր շրջակայ դեղօրայքն . զոր  
 յետ սակաւ աւուրց դարձան զօրքն Պարսից  
 ի վերայ Տաճկաց եւ անխնայ կոտորեցին  
 զանթիւ եւ զանհամարս աւելի քան զԹԵ բիւրս  
 եւ առին զքաղաքն դարձեալ յետս : Եւ ասին  
 թէ սուլթան Մուրատն փախտական դար-  
 ձաւ ի տուն . եւ այլք ասեն թէ մնաց ի ձմե-  
 ռայնոցն Համիթ . եւ զայլն յայլում վայրի  
 գրեցուք : Զայս սակաւս փոքր ի շատէ ծա-  
 նուցաք ըստ կարի մերում , որպէս լուաք ի  
 հաւատարիմ արանց . աղաչեմ համարձակու-  
 թեանս լուել եւ զանյարմարութիւն բանիս ըն-  
 դունել . զլաւն ի վատթարացն բաժանել եւ  
 ինձ չի մեղադրել :